

---

**ՀՀ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆ ՀԱՏՎԱԾԻ ԱՃԻ ԴԻՆԱՄԻԿԱՆ ԵՎ  
ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ**

**ՎԱՐԴՈՒՇ ԳՅՈՋԱԼՅԱՆ**

Համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի հետևանքները, որոնք դեռևս շարունակում են դրսևորվել, ինչպես աշխարհի շատ երկրներում, Հայաստանում ևս ստիպեցին վերանայել մակրոտնտեսական քաղաքականության հիմնական ուղղությունները՝ և մեկ անգամ հաստատելով կայուն տնտեսություն կառուցելու ճանապարհին իրական հատվածի հիմնարար նշանակությունը: Պատահական չէ 2010 թ. դեկտեմբերին ձեռնդրվածների հետ կայացած հանդիպման ժամանակ ՀՀ նախագահի այն նկատառումը, որ հետճգնաժամային աշխարհը որակապես տարբերվելու է մինչճգնաժամայինից, և տնտեսական նոր հարացույցն այլևս հիմնված է լինելու տնտեսական աճի այլ շարժիչների վրա:

ՀՀ տնտեսության զարգացման վերջին միտումները վկայում են, որ այդ շարժիչների դերում հանդես են գալու իրական հատվածի ոլորտները, առաջին հերթին՝ գյուղատնտեսությունն ու արդյունաբերությունը:

Տնտեսության իրական հատվածը խոշոր, միջին և փոքր առևտրային այն կազմակերպությունների ամբողջությունն է, որոնց հիմնական գործունեությունն ուղղված է շուկայում սպառողների նյութական պահանջմունքները բավարարող ապրանքների արտադրությանը<sup>1</sup>:

Քանի որ լայն առումով իրական հատվածի հիմնական ոլորտներ են համարվում արդյունաբերությունը, գյուղատնտեսությունը և շինարարությունը, ՀՀ տնտեսության իրական հատվածի զարգացման դինամիկան կուսումնասիրենք ըստ այդ ոլորտների:

**Արդյունաբերություն:** Անցումային շրջանի սկզբնական փուլում, ինչպես բոլոր հետխորհրդային երկրներում, Հայաստանում ևս արձանագրվեց հիմնական տնտեսական ցուցանիշների աննախադեպ անկում, իսկ տնտեսական անկայուն վիճակի առաջին հարվածն իր վրա ընդունեց տնտեսության իրական հատվածը, առավելապես՝ արդյունաբերության ոլորտը:

ԱՊՀ երկրները անցումային շրջան մտան՝ ունենալով արդյունաբերական ավելի խոշոր և ծառայությունների ավելի փոքր հատված, քան բնակչության մեկ շնչի հաշվով եկամուտների համեմատական մակարդակով շուկայական տնտեսությամբ երկրները: Անցումային շրջանում այդ երկրների արդյունաբերական հատվածը կրճատվեց՝ կազմելով տնտեսության ամբողջ ծավալի մոտ 1/3-ը, իսկ ծառայությունների բաժինը աճեց

---

<sup>1</sup> Տե՛ս **Վ. Գյոզալյան**, Տնտեսության իրական հատվածի բնորոշումը և հիմնական ոլորտները, «Բանբեր Երևանի համալսարանի», «Սոցիոլոգիա, Տնտեսագիտություն», 132.5, 2010, էջ 43:

մինչև այդ ծավալի կեսը<sup>2</sup>: Մասնավորապես՝ Հայաստանում համախառն թողարկման կառուցվածքում արդյունաբերության բաժինը 1990 թ. 44.5%-ից 1997 թ.-ին հասավ արդեն 28.8%-ի<sup>3</sup>:

Արդյունաբերության անկում հիմնականում դիտվեց 1992-1993 թթ., որի պատճառը առաջին հերթին երկրում պատերազմական դրությունն էր, շրջափակումը, ինչպես նաև էներգետիկ ճգնաժամը: Էներգետիկ հատվածի վերականգնումը, պայմանավորված ատոմակայանի վերագործարկման հետ, մեծապես նպաստեց, որ արդյունաբերության աճի բարենպաստ պայմաններ ստեղծվեն: Այդուհանդերձ, արդյունաբերական թողարկման իրական ծավալների աճի միջին տարեկան տեմպը ՀՆԱ-ի միջին տարեկան 5.3% հավելածի դիմաց 1994-1997 թթ. կազմեց ընդամենը 1.5%<sup>4</sup>:

Սկսած 2002-2003 թթ.՝ ճյուղում դիտվել է աճ, որը հիմնականում պայմանավորված էր մետաղի հումքի արդյունահանման և մետաղի վերամշակման ծավալների աճով: 2003-2007 թթ. արդյունաբերության աճը եղել է ծրագրվածից ցածր՝ 6.6%-ի փոխարեն կազմելով 4.6%<sup>5</sup>: Դա մեծ մասամբ պայմանավորված էր 2006 թ. արդյունաբերության անկմամբ, որի հիմնական պատճառ կարելի է համարել քիմիական արդյունաբերության, ադամանդագործության և ծխախոտի արտադրության կրճատումը: Ըստ տարիների՝ արդյունաբերության աճի տեմպերը 2003 թ. կազմել են 15.1%, 2004 թ.՝ 2.4% և 2005 թ.՝ 7.6%:

2007 թ. և 2008 թ. արդյունաբերությունում աճը կազմել է համապատասխանաբար՝ 2.6% և 1.7%, իսկ 2009 թ.՝ համաշխարհային ճգնաժամի ազդեցության պատճառով ճյուղում գրանցվել է անկում 7.5%-ի չափով<sup>6</sup>:

Ուսումնասիրելով 2000-2010 թթ. արդյունաբերության հիմնական տնտեսական ցուցանիշները՝ արձանագրում ենք, որ արդյունաբերական արտադրանքի ծավալների աճին զուգընթաց՝ ավելացված արժեքում դիտվել է արդյունաբերության մասնաբաժնի նվազում (տե՛ս աղյուսակ 1): Հակառակ միտումը դիտվել է միայն 2009 թ., ինչը ֆինանսատնտեսական ճգնաժամի հետևանքով ավելացված արժեքում ոչ իրական հատվածի ճյուղերի մասնաբաժնի կրճատմամբ էր պայմանավորված:

Նման զարգացումը առաջին հերթին վկայում է ոչ արդյունաբերական ճյուղերի համեմատությամբ արդյունաբերության ճյուղերում ավելի ցածր արտադրողականության մասին, սակայն մասամբ պայմանավորված է նաև արդյունաբերության մեջ ներդրումների հետզման համար պահանջվող ավելի երկար ժամանակահատվածով և ավելի մեծ ծախսատարությամբ:

Երբ դիտարկում ենք արդյունաբերության հիմնական տնտեսական ցուցանիշները, արձանագրում ենք նաև, որ նշված ժամանակահատվածում արդյունաբերության ոլորտում արտադրանքի աճը ուղեկցվել է զբաղվածության զգալի կրճատմամբ:

<sup>2</sup> Տե՛ս **Ս. Դավոյան, Ա. Մարկոսյան, Զ. Սարգսյան**, Վերափոխումները անցումային երկրների տնտեսություններում, Եր., 2003, էջ 53:

<sup>3</sup> Տե՛ս **Ա. Աղանբեգյան** և ուրիշներ, Տնտեսական վերափոխումները անցումային շրջանում. տեսություն և արդյունքներ, Եր., 1999, էջ 193:

<sup>4</sup> Տե՛ս նույն տեղը:

<sup>5</sup> Տե՛ս «Կայուն զարգացման ծրագիր», հավելված ԳԳ կառավարության 2008 թ. հոկտեմբերի 30-ի № 1207-Ն որոշման, էջ 71 (տե՛ս [www.gov.am](http://www.gov.am)):

<sup>6</sup> Ըստ՝ «Հայաստանը թվերով-2010» տվյալների:

2000 թ. համեմատությամբ արդյունաբերության մեջ զբաղվածների թվաքանակը 2009 թ. կրճատվել է մոտ 39%-ով, 2010 թ.՝ 35.8%-ով (2010 թ. նախորդ տարվա համեմատությամբ զբաղվածությունն արդյունաբերության մեջ աճել է 4%-ով): Նման պատկերը մասամբ բացատրվում է արդյունաբերության ոլորտում նոր տեխնոլոգիաների ներդրման և որակավորման ավելի բարձր մակարդակ ունեցող աշխատուժի ներգրավման շնորհիվ տեղի ունեցած արտադրողականության աճով, սակայն զբաղվածության կրճատման հիմնական պատճառներից է նաև «ավանդական» արդյունաբերական ճյուղերից աշխատուժի դուրսմղումը, որը մասնակիորեն կլանվել է գյուղատնտեսության կողմից, ինչպես նաև անցումային շրջանի սկզբնական փուլից ժառանգություն մնացած «թաքնված» գործազրկության նվազումը:

**Աղյուսակ 1**

**Արդյունաբերության հիմնական տնտեսական ցուցանիշները 2000-2010 թթ.<sup>7</sup>**

	2000	2001	2002	2003	2004	2005	2006	2007	2008	2009	2010
Արդյունաբերության մասնաբաժինն ավելացված արժեքում*, %	24.1	22.3	20.9	21.2	20.8	23.8	18.8	16.6	14.7	15.4	-
Արդյունաբերական կազմակերպությունների թվաքանակը, միավոր**	1234	1713	1816	2053	2195	2270	2335	2341	2317	2393	2484
Արդյունաբերական արտադրանքի ծավալը, մլրդ դրամ	300.5	309.3	341.1	426.1	535.3	651.9	644.9	716.5	739.3	664.5	824.2
Արդյունաբերական արտադրանքի ծավալի ինդեքսը նախորդ տարվա նկատմամբ, %	106.4	105.3	114.6	115.1	102.4	107.6	99.1	102.6	101.7	92.5	109.7
Արդյունաբերողների զանգվածային ինդեքսը նախորդ տարվա նկատմամբ, %	100.8	99.6	102.5	108.9	121.7	107.7	100.9	100.6	102.2	107.1	110.7
Արդյունաբերա-արտադրական անձնակազմի միջին ցուցակային թվաքանակը, հազ. մարդ	124.1	109.1	94.7	83.5	75.9	80.8	78.9	81.6	80.8	76.5	79.6
Նախորդ տարվա նկատմամբ, %	86.3	87.9	86.8	88.2	90.9	104.5	97.6	103.4	99	94.7	104
Միջին ամսական անվանական աշխատավարձը, հազ. դրամ	29.0	35.8	42.1	53.5	61.2	67.9	78.6	94.5	103.9	114.2	-

\* Առանց անուղղակի հարկերի:

\*\* Տրված է միայն վիճակագրական հաշվետվություն ներկայացրած կազմակերպությունների թվաքանակը:


- Տվյալը բացակայում է:

<sup>7</sup> Աղյուսակը կազմել ենք՝ ըստ Հայաստանի վիճակագրական տարեգրքերի տվյալների:

Արդյունաբերության մեջ շարունակում է առաջնային խնդիրներից մնալ նաև արտադրանքի բազմազանեցումը: Ակնհայտ է, որ արդյունաբերական արտադրանքի տեսականին ընդգրկում և բազմազանեցված համարել չենք կարող: Չնայած ոլորտում արձանագրված մի շարք կառուցվածքային դրական փոփոխություններին, որոնք հիմնականում կատարվել են օտարերկրյա խոշորածավալ ներդրումների և տեխնոլոգիական նորանվճարությունների հաշվին՝ ապահովելով ճյուղում աճի տեմպեր, այդուհանդերձ արդյունաբերության մեջ շարունակում է գերակայել մշակող արդյունաբերության կշիռը՝ իր մի քանի հենքային ճյուղերով (տես գծապատկեր 1):

**Գծապատկեր 1**

**Արդյունաբերական արտադրանքի կառուցվածքն ըստ տնտեսական գործունեության բաժինների<sup>8</sup>**



Ըստ 2010 թ. տվյալների՝ մշակող արդյունաբերության մեջ մեծ տեսակարար կշիռ են կազմել սննդամթերքի (ներառյալ խմիչքների) արտադրությունը (47.4%), մետաղագործական արդյունաբերությունը (24.8%), այլ ոչ մետաղական հանքային արտադրատեսակների արտադրությունը (9.2%)<sup>9</sup>: Հետևաբար կարծում ենք՝ պետության մակրոտնտեսական քաղաքականության ուղղվածություններից պետք է լինի արդյունաբերության ոլորտում արտադրվող ապրանքների բազմազանեցմանը (դիվերսիֆիկացմանը) նպաստող պայմանների ապահովումը՝ բիզնես միջավայրը բարելավելու, շուկա նոր մուտք գործող ընկերություններին աջակցելու, նորարարությունները խթանելու և այլ լծակներ օգտագործելու միջոցով:

**Գյուղատնտեսություն:** Ի տարբերություն արդյունաբերության՝ իննսունականների սկզբին գյուղատնտեսությունը դրսևորեց աճի միտումներ: Դա առաջին հերթին արդյունք էր արմատական բարեփոխումների շարքում առաջնահերթ իրականացված հողի սեփականաշնորհման

<sup>8</sup> Ըստ «Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2010» և «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2010 թ. հունվար-դեկտեմբերին» վիճակագրական տեղեկագրերի տվյալների:


<sup>9</sup> Ըստ «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2010 թ. հունվար-դեկտեմբերին» վիճակագրական տեղեկագրի տվյալների:

(1991-1992 թթ.) և գների ազատականացման, որոնք նպաստավոր պայմաններ ստեղծեցին սննդամթերքի արտադրության և գյուղատնտեսության զարգացման համար: 1993 թ. և 1994 թ. գյուղատնտեսության մասնաբաժինը ՀՆԱ-ում համապատասխանաբար կազմում էր 46.3% և 41.8%: Սակայն հողի մասնավորեցման ընձեռած հնարավորությունները հավանաբար թերի օգտագործվեցին, քանի որ դրանք չզուգորդվեցին գյուղատնտեսական արտադրանքի վերանշակման բնագավառի համարժեք վերափոխումներով և շուկայական մեխանիզմների լիարժեք գործունեության համար անհրաժեշտ ենթակառուցվածքների արագ ձևավորմամբ, ինչի հետևանքով հետագա տարիներին գյուղատնտեսության մասնաբաժինը համախառն թողարկման կառուցվածքում կրճատվեց<sup>10</sup>, և արդեն 2000 թ. այդ ցուցանիշը կազմում էր 23.2%<sup>11</sup>:

Նշված տնտեսական զարգացումներին զուգընթաց՝ զբաղվածության մակարդակը տնտեսության այլ ճյուղերի համեմատությամբ գյուղատնտեսության ոլորտում եղել և շարունակում է մնալ ամենաբարձրը՝ դրանով իսկ պայմանավորելով ՀՀ գյուղատնտեսության ոլորտի հիմնական առանձնահատկությունն ու գերխնդիրը՝ բարձր զբաղվածություն, օգտագործման ցածր արդյունավետություն (տե՛ս գծապատկեր 2):

## Գծապատկեր 2

**Զբաղվածության և համախառն թողարկման կառուցվածքում գյուղատնտեսության մասնաբաժնի ցուցանիշը և ՀՆԱ-ի ու գյուղատնտեսության աճը<sup>12</sup>**



Ինչպես երևում է գծապատկերի տվյալներից, գյուղատնտեսության կշիռը ՀՆԱ-ում ունի նվազման միտում, ինչը պայմանավորված է տնտեսության ընդհանուր աճի տեմպերի համեմատությամբ գյուղատնտեսության

<sup>10</sup> Տե՛ս Ա. Աղանբեգյան և ուրիշներ, նշվ. աշխ., էջ 193:

<sup>11</sup> Ըստ ԱՎԾ տվյալների բազայի (տե՛ս [www.armstat.am](http://www.armstat.am)):

<sup>12</sup> Աղյուսակը կազմել ենք ըստ ՀՀ ազգային վիճակագրական ծառայության տվյալների:

ավելի դանդաղ աճով, որն էլ իր հերթին հետևանք է գյուղատնտեսության մեջ աշխատանքի արտադրողականության ցածր մակարդակի:

Սրա հետ մեկտեղ՝ գյուղական բնակավայրերում, որտեղ գյուղատնտեսությունը զբաղվածությունն ապահովող հիմնական ոլորտն է, աշխատանքի արտադրողականության ցածր մակարդակի պատճառով ցածր է նաև զբաղվածությունից ստացվող եկամուտների մակարդակը, ինչը հանգեցնում է գյուղական բնակավայրերում աղքատության ավելի բարձր ցուցանիշի:

Եթե 1996 թ. գյուղատնտեսությունում և ոչ գյուղատնտեսական ոլորտում միավոր աշխատանքի արժեքը համարյա նույնն էր, ապա արդեն 2006 թ. ոչ գյուղատնտեսական ոլորտում այն ավելի քան երեք անգամ բարձր էր<sup>13</sup>: Դա վկայում է ոչ միայն գյուղական բնակավայրերում աղքատության մակարդակի խորացման, այլև գյուղատնտեսության աճի ֆինանսավորման համար անհրաժեշտ ներքին ռեսուրսների անբավարարության մասին, մասնավորապես, երբ գյուղատնտեսական արտադրանքի մոտ 97%-ը բաժին է ընկնում բնակչության տնտեսություններին, և միայն մոտ 3%-ը՝ առևտրային կազմակերպություններին:

Հաշվի առնելով գյուղատնտեսության մեջ առկա վերոնշյալ խնդիրները՝ թե՛ «Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագրի» (ԱՀՌԾ), թե՛ «Կայուն զարգացման ծրագրի» և թե՛ պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրերի շրջանակներում կառավարությունը հատուկ ուշադրություն է դարձնում հատկապես գյուղատնտեսական ոլորտին, որը իրականացվում է հիմնականում արտադրողականության աճը խթանելով:

ԱՀՌԾ-ում գյուղատնտեսության անարդյունավետության առանցքային պատճառներից նշվում էին տնօրինվող ռեսուրսների և արտադրության փոքր չափերը, ինչպես նաև հողակտորների մասնատվածությունը: Հետևաբար՝ արդյունավետության աճի հիմնական նախապայմաններից էր համարվում տնտեսությունների խոշորացումը<sup>14</sup>:

Խնդիրը շարունակում է արդիական մնալ նաև «ՀՀ կառավարության գյուղի և գյուղատնտեսության 2010-2020 թվականների կայուն զարգացման ռազմավարություն»<sup>15</sup> ծրագրի շրջանակներում: 2010 թ. տվյալներով մեկ գյուղացիական տնտեսությանը միջին հաշվով բաժին է ընկնում 1.4 հա գյուղատնտեսական հողատեսք, այդ թվում՝ 1.1 հա վարելահող, որը հնարավորություն չի ընձեռում իրականացնելու արդյունավետ տեխնոլոգիաների կիրառում և արդյունավետ տնտեսավարում<sup>16</sup>:

Այս առումով նախատեսվում է պլանային ժամանակահատվածում ապահովել արդյունավետ տեխնոլոգիաների կիրառմամբ առևտրային գյուղատնտեսական կազմակերպությունների, կոոպերատիվների և շուկայական ենթակառուցվածքների հետ ինտեգրված ընտանեկան գյուղացիական տնտեսությունների զարգացումը<sup>17</sup>:

<sup>13</sup> Տե՛ս «Կայուն զարգացման ծրագիր», հավելված ՀՀ կառավարության 2008 թ. հոկտեմբերի 30-ի № 1207-Ն որոշման, էջ 142:

<sup>14</sup> Տե՛ս «Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագիր», Եր., 2003, էջ 63:

<sup>15</sup> Տե՛ս «Հավելված №1 ՀՀ կառավարության 2010թ. նոյեմբերի 4-ի № 1476-Ն որոշման»:

<sup>16</sup> Տե՛ս «ՀՀ կառավարության գյուղի և գյուղատնտեսության 2010-2020 թվականների կայուն զարգացման ռազմավարություն», էջ 12 (տե՛ս [www.minagro.am](http://www.minagro.am)):

<sup>17</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 18:

Չնայած անցումային փուլում գյուղատնտեսության ոլորտի առջև ծառայած վերոնշյալ խնդիրներին՝ այդուհանդերձ արձանագրվել են նաև մի շարք դրական տեղաշարժեր, որոնցից կարելի է առանձնացնել միջազգային կազմակերպությունների հետ համագործակցությունը:

Առևտրի համաշխարհային կազմակերպությանը (ԱՀԿ), ՄԱԿ-ի պարենի և գյուղատնտեսության կազմակերպությանը (ՊԳԿ), Գյուղատնտեսության զարգացման միջազգային հիմնադրամին (ԳԶՄՀ) և այլ միջազգային կազմակերպություններին անդամակցությունը կարևոր ազդակ է համաշխարհային զարգացումների տիրույթում գտնվելու, ինչպես նաև համընդհանուր պահանջներին համահունչ ոլորտի իրավական և տեխնոլոգիական կարգավորման համար, որը արտաքին ներդրումներ ներգրավելու և առևտուրը զարգացնելու լավ նախադրյալ է<sup>18</sup>:

**Շինարարություն:** Անցումային շրջանում երկրի ապաստարանաբերականացմանը զուգընթաց արագորեն սկսեց զարգանալ շինարարության ոլորտը՝ վերածվելով տնտեսական աճ ապահովող հիմնական ճյուղի: Ինստուևականների սկզբին տեղի ունեցած կտրուկ անկմանը հաջորդեցին այլ ճյուղերի համեմատությամբ ավելի բարձր աճի տեմպերը, և արդեն 2001-2003 թթ. ոլորտում դիտվեց աննախադեպ արագ աճ՝ տարեկան 40%, ինչը ավելի շատ մասնավոր ներդրումների, քան դրամաշնորհային միջոցների օգտագործման արդյունք էր<sup>19</sup>:

2003-2007 թթ. ճյուղում տարեկան միջին աճը կազմել է 28.5%՝ ծրագրված 9.9%-ի փոխարեն<sup>20</sup>, որի շնորհիվ համախառն արտադրանքի մեջ ճյուղի տեսակարար կշիռը 15.7%-ի փոխարեն կազմել է ավելի քան 20%, որը նույնպես պայմանավորված էր մասնավոր ներդրումների, հատկապես բնակարանային շինարարության աճով: Վերջինիս հիմնական պատճառը արտերկրից դրամական փոխանցումների և բնակչության խնայողությունների՝ նախորդ տարիների համեմատությամբ ավելի բարձր տեմպով աճն էր:

Համադրելով 2005-2010 թթ. շինարարության աճի ինդեքսը և շինարարության ծավալները՝ ըստ ֆինանսավորման աղբյուրների՝ ստանում ենք հետևյալ պատկերը (տե՛ս գծապատկեր 3):

Մինչև 2008 թ. ճյուղում գրանցվել է աճ, սակայն միաժամանակ դիտվել է աճի տեմպի նվազման միտում: Զուգահեռաբար նկատվել է բնակչության միջոցների հաշվին շինարարության ֆինանսավորման աճ և կազմակերպությունների միջոցների հաշվին իրականացվող ֆինանսավորման նվազում: 2009 թ. սկսած պատկերը կտրուկ փոխվել է. ճգնաժամի պատճառով ճյուղում տեղի է ունեցել կտրուկ անկում:

Հակաճգնաժամային միջոցառումների շրջանակներում մեծացել է պետական բյուջեի հաշվին ֆինանսավորումը՝ մասնավորապես ենթակառուցվածքներին ուղղված լայնածավալ ծրագրեր իրականացնելու շնորհիվ:

<sup>18</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 8:


<sup>19</sup> Տե՛ս «Հայաստան. ուսումնասիրություններ և վերլուծություններ», Եր., 2005, էջ 38:

<sup>20</sup> Տե՛ս «Կայուն զարգացման ծրագիր», հավելված 33 կառավարության 2008 թ. հոկտեմբերի 30-ի № 1207-Ն որոշման, էջ 71 (տե՛ս [www.gov.am](http://www.gov.am)):

Միաժամանակ կտրուկ նվազել են բնակչության միջոցների հաշվին շինարարության ծավալները՝ որպես հետևանք բնակչության եկամուտների, մասնավորապես արտաքին տրանսֆերտների կրճատման:

**Գծապատկեր 3**

**Շինարարության աճը (համադրելի գներով, նախորդ տարվա նկատմամբ, %) և ծավալներն՝ ըստ ֆինանսավորման աղբյուրների (ընդհանուրի նկատմամբ, %)<sup>21</sup>**



Ընդհանուր շինարարության մեջ զգալիորեն աճել է կազմակերպությունների միջոցների հաշվին շինարարության բաժինը, որը հետևանք է մի կողմից՝ բնակչության միջոցների հաշվին իրականացվող շինարարության ավելի մեծ չափով կրճատման, մյուս կողմից՝ հակաճգնաժամային միջոցառումների իրականացման շրջանակներում գործարար միջավայրի բարելավմանն ուղղված լծակների կիրառման:

Մասնավորապես՝ շինարարության ոլորտում պետական երաշխիքներ են տրվում այն կառուցապատողներին, որոնց բազմաբնակարան անավարտ շինություններն ունեն 50% և ավելի անավարտության աստիճան: Դր կառավարությունը մեկ այլ նախաձեռնությամբ ձեռնամուխ է եղել նոր օրենքի մշակման, ըստ որի՝ նախատեսվում է սուբսիդավորել ԴԴ-ում 2009-2011 թթ. մեկ միլիարդ դրամ և ավելի արժողությամբ հանրային բնույթի նոր շինարարության գործընթացը՝ շինարարության ավարտից հետո կառուցապատողներին վերադարձնելով ընթացքում պետական բյուջե վճարած ԱԱԴ-ի և սոցիալական վճարների ամբողջ ծավալը<sup>22</sup>:

Էսպես աճել են նաև օտարերկրյա ներդրումների հաշվին իրականացվող շինարարության ծավալները՝ հատկապես միջազգային վարկերի հաշվին (Զարգացման և վերակառուցման եվրոպական բանկ, Համաշ-

<sup>21</sup> Ըստ ԴԴ ԱԿԾ «Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2010», «Շինարարությունը ԴԴ-ում 2010 թ. հունվար-դեկտեմբերին» վիճակագրական տեղեկագրերի և «Կայուն զարգացման ծրագրի» տվյալների:

<sup>22</sup> Տե՛ս «Անփոփ հաշվետվություն ԴԴ կառավարության հակաճգնաժամային միջոցառումների իրականացման մասին», էջ 18 (տե՛ս [www.gov.am](http://www.gov.am)):

խարհային բանկ, Ասիական զարգացման բանկ, Միջազգային համագործակցության ճապոնական բանկ, Գերմանական զարգացման բանկ):

Վերը նկարագրված զարգացումներից հետևում է, որ շինարարության ոլորտում առկա են ֆինանսավորման աղբյուրների անկայունություն և արտաքին գործոնների (օր.՝ ճգնաժամային զարգացումներ) նկատմամբ բարձր առաձգականություն:

Կարծում ենք՝ շինարարության խթանման ռազմավարությունը առաջին հերթին պետք է հենվի ոլորտում գործող կազմակերպությունների արդյունավետության բարձրացման վրա, քանզի կազմակերպությունների միջոցների հաշվին շինարարության ֆինանսավորումը ընդհանուր աճի մեջ ապահովում է ավելի մեծ մասնաբաժին:

Դրական տեղաշարժեր արձանագրվել են շինարարության ոլորտը կարգավորող օրենսդրական դաշտում:

Նշենք, որ ըստ Համաշխարհային բանկի և Միջազգային ֆինանսական կորպորացիայի «Գործարարությամբ զբաղվելը» (Doing business) ամենամյա հաշվետվության<sup>23</sup>, 2011 թ. Հայաստանում շինարարության թույլտվություն ստանալու գործընթացը բաղկացած էր 20 ընթացակարգից, տևում էր 137 օր, և պահանջվող ծախսերի չափը կազմում էր մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի 122.7%-ը: Այս ցուցանիշով Հայաստանը 183 երկրների շարքում 2011 թ. դրությամբ գրավում է 78-րդ տեղը՝ 2010 թ. համեմատությամբ (74-րդ տեղ) իր տեղը վատթարացնելով 4 հորիզոնականով<sup>24</sup>: Այս առումով օրենսդրական դաշտում բարեփոխումներ իրականացնելու նպատակով կառավարության ընդունած որոշման շնորհիվ<sup>25</sup>, ըստ գնահատումների, շինարարության թույլտվության ընթացակարգերը 20-ից նվազել են մինչև 7-ի, իսկ նախկինում ծախսվող 137 օրվա փոխարեն այժմ պահանջվում է ընդամենը 27 օր: Ենթադրվում է, որ բարեփոխումների շնորհիվ գործառական ծախսերին զուգահեռ կնվազեն նաև կոռուպցիոն ռիսկերը:

Ամփոփելով կարող ենք ասել, որ, չնայած մակրոտնտեսական կարգավորման տեսանկյունից ունեցած մեծ հնարավորությանը, իրական հատվածի ոլորտներում առկա են արդյունավետության բարձրացման և կառավարման համակարգի կատարելագործման հետ կապված լուրջ խնդիրներ, որոնց արմատները մասամբ ձգվում են միջև հետխորհրդային վերափոխումների սկզբնական շրջան, մասամբ պայմանավորված են պետության վա-

<sup>23</sup> Համաշխարհային բանկի և միջազգային ֆինանսական կորպորացիայի «Գործարարությամբ զբաղվելը» (Doing Business) հաշվետվությունում գնահատվում և մյուս երկրների հետ (դիտարկվում են 183 երկրներ) համեմատվում են յուրաքանչյուր երկրում գործարարությամբ զբաղվելու 11 ոլորտների ցուցանիշներ՝ գնահատելով օրենսդրական դաշտը և հաշվի առնելով տվյալ երկրի՝ տվյալ ոլորտում մասնագիտացված կազմակերպությունների հարցումների պատասխանները: Դիտարկվող 11 ցուցանիշներն են՝ նոր բիզնես սկսելը, շինարարության թույլտվություն ստանալը, գույքի գրանցումը, վարկավորման գործընթացը, ներդրումների խթանումը, հարկերի վճարումը, արտաքին առևտուրը, բիզնեսի փակումը, օրենսդրական ակտերի կատարումը, էլեկտրականության հասանելիությունը, աշխատողների ներգրավման գործընթացը:

<sup>24</sup> Տե՛ս «Doing Business-2011», A Copublication of World Bank and International Finance Corporation, էջ 147:

<sup>25</sup> Տե՛ս «ՀՀ Կառավարության որոշումը ՀՀ-ում շինարարության օբյեկտների կառուցապատման ընթացակարգերը կանոնակարգելու և ՀՀ կառավարության մի շարք որոշումներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», 3 մարտի 2011 թվականի № 257-Ն:

րած մակրոտնտեսական քաղաքականության բացթողումներով, մասամբ էլ արտաքին գործոնների հանդեպ ոլորտների բարձր առաձգականության հետևանք են: Մասնավորապես՝ արդյունաբերության ոլորտում դա վերաբերում է ներդրումային գրավչության բարձրացմանը և դեպի արտաքին շուկաներ կողմնորոշմանը, գյուղատնտեսության ոլորտում՝ հողօգտագործման համակարգի կատարելագործմանը, ապահովագրական համակարգի ներդրմանը և վարկային միջոցների հասանելիությանը, շինարարությունում՝ մասնավորի և բանկային հատվածի համագործակցության ակտիվացմանը, օրենսդրական դաշտի որոշ բարեփոխումներին և այլն: Հետևաբար, ՀՀ տնտեսության համար առաջնային նշանակություն են ձեռք բերում իրական հատվածի արդյունավետության բարձրացման ուղիների ուսումնասիրությունը և համապատասխան տնտեսական գործիքների ներդրումը:

**ВАРДУШ ГЁЗАЛЯН – Динамика роста и тенденции развития реального сектора экономики РА.** – В статье рассматривается динамика роста основных сфер реального сектора экономики страны – промышленности, сельского хозяйства и строительства, – начиная с раннего постсоветского периода. Кроме того, анализируются основные тенденции их развития после мирового экономического кризиса. Этот анализ положения дел в трёх основных сферах позволяет выявить факторы, препятствующие развитию отраслей, стратегически важных для стабилизации экономики после мирового кризиса.

Результаты исследования выявляют направления, в рамках которых следует использовать инструменты макроэкономической политики, направленной на повышение эффективности реального сектора экономики.

**VARDUSH GYOZALYAN – The Dynamics of Growth and the Trends of Development of the Real Sector of Economy of RA.** – The article discusses the dynamics of growth of the main fields of the real sector: industry, agriculture and construction, sometimes the main trends of development after the world economic crisis are considered.

The examination of the basic economic indicators in the three fields makes it possible to reveal a number of factors impeding the economic growth in the sector, which became strategically important for the stabilization of the economy after the world crisis.

The results of this research give an opportunity to reveal the ways within the scope of which the instruments of macroeconomic policy aimed at increasing the efficiency of economy's real sector in RA must be used.